





Թաղայեալք լինիմք, եւ ո՛չ խոնարհիմք

ՄԵՐԱՆ

Թիվ 24 (322) Դեկտեմբեր 2022թ.

Լ Ղ Հ Ք Ա Շ Ա Թ Ա Ղ Ի Շ Ր Ջ Ա Ն Ա Յ Ի Ն Թ Ե Ր Թ Էլ. huugh ` tertmeran@mail.ru

Բարի ճանապարհ, 2022 թվական



Ճանապարհում ենք ևս մեկ տարի՝ 2022-ը, որը, ինչպես 2020-ը, նույնպես կորուստներով էր ու ցավով լի: Այժմ էլ դեռ անհայտ է՝ ինչքան է փակ մնալու Արցախը Մայր հայրենիքին կապող միակ ճանապարհը, որը փակել են թուրքերը, իսկ միջազգային հանրությունն արձագանքում է ընդամենը ձևականորեն: Իսկ այդ նույն ճանապարհին ապահովող ռուսական խաղաղապահներն ընդամենը կանգնած են թուրքերի դեմ ու վերջ՝ չիրականացնելով իրենց իրական պարտավորությունը: Մենք 2020-ին առանց պայքարի, շատ հանգիստ թուրքին թողեցինք Քաշաթաղի ու Քարվաճաղի շրջաններն ու հասանք վերջին նաև մարդկային մեծ կորուստներին: 2022-ին հանձնեցինք շրջանի Աղավնո գյուղը, որը վերջին 2 տարիներին դարձել էր պայքարի խորհրդանիշ ու հույս-դարպաս Արցախի համար: Հանձնեցինք «ՄԻԱՑՈՒՄ»-ի խորհրդանիշ Բերձորը՝ Քաշաթաղի շրջակայքում, որտեղ 1994-2022թթ. ծնվեցին շատ հայ մանուկներ ու այժմ դառնացած ցրված են մեր երկրով մեկ: Հավատացինք «Խաղաղություն» է հաստատվելու, և Գորիս-Ստեփանակերտ նորակառույց ճանապարհը կգործի անխափան: Շուտ ենք հավատում, շուտ ենք համակերպվում, և այս պատճառով այսօր նման վիճակում ենք: Այնուամենայնիվ, հուսահատվել չկա, պատմության հազարավոր տարիների դասերից երկի որևէ փորձ կիրականացնենք՝ այսինքն՝ կմիավորվենք: Մորթապաշտությունն ու հարստանալու մոլուցքը վերացնենք մեզանից: Հիշենք՝ Արցախը մշտապես է եղել մեր հայրենիքի արևելյան ՎԱՀԱՆ-ՋՐԱՀԸ և տեղ կանգնենք մեր ասպարին: Տեղեկացնենք նաև՝ հնարավոր է Քաշաթաղի պատմության անբաժանելի մաս ու վավերագիր «ՄԵՐԱՆ» թերթի վերջին համարն է նաև: Արդեն ծանուցվել է՝ փակվելու է «ՄԵՐԱՆ» փակ բաժնետիրական ընկերությունը, բայց կաշխատեն անխափան պահել թերթի գործունեությունը, հետագայում կերևա՝ ինչ ձևաչափով: Ամեն դեպքում «ՄԵՐԱՆ»-ը կշարունակի լինել քաշաթաղցիների համախմբող ու տեղեկատու: Բարի ճանապարհ 2022-ին և բարի մուտք 2023-ին, որ լինի մերժողվորի համար հաջողությունների, ծեղքերումների, ազատագրված հայրենիքի տարի: **Ջ. Ընդոյան**

Ստեփանակերտի հանրահավաքին 60-70 հազար մարդ է մասնակցել

Այս մասին Telegram-ի իր ալիքում գրել է Արցախի պետական նախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանը՝ անդրադառնալով դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքին:

«Թող Ալիեի ռեժիմը եւ ադրբեջանական հասարակությունն իրենց հարց տան՝ ինչպե՞ս է այսքան մարդ հավաքվել շրջափակման տակ, եթե, ըստ նրանց, Արցախում նույնիսկ 40 հազար մարդ չկա », - նշել է Բեգլարյանը:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունել է Արցախի պատվիրակությանը

Դեկտեմբերի 25-ին Սուրբ Գայանե վանքում հավաքու Սուրբ և Ամնայն Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամնայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց խաղաղության և զորակցության աղոթք հանուն Արցախի:

Արարողությանը ներկա էր ԱՀ պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանի գլխավորած պատվիրակությունը, ովքեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության հետ միասին աղոթք վերադարձեցին առ Աստված Հայաստանի և Արցախի խաղաղության և համայն հայ ժողովրդի անվտանգ ու ապահով կյանքի համար: Հավաքու արարողության՝ Արցախի պատվիրակությանն ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպմանը պատվիրակության անդամները Հայոց Հայրապետին մանրամասներ ներկայացրեցին Արցախում, մասնավորապես Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով ստեղծված իրավիճակի առնչությամբ, ինչը հանգեցրել է արցախցիների կենսական իրավունքների ոտնահարմանը և արցախահայությանը կանգնեցրել հումանիտար աղետի առաջ: Դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող սադրանքը՝ զրուցկիները քննարկեցին իրավիճակի հաղթահարման ուղղված քայլերը: Այս առնչությամբ կարևորելով համազգային ներուժի և ջանքերի մեկտեղումը՝ ի զորակցություն Արցախի ժողովրդի, Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայ Եկեղեցին շարունակելու է ջանքեր գործադրել հնարավոր աջակցություն ու զորակցություն ապահովելու Արցախին և արցախահայությանը:

Արցախի ժողովրդի կոչ-ուղերձը

«Դեկտեմբերի 12-ից սկսած Արցախը հայտնվել է լիակատար շրջափակման մեջ. ավելի քան 120 000 մարդ, այդ թվում՝ շուրջ 30 000 երեխաներ հայտնվել են ծանր կացության մեջ՝ իսպառ գրկված լինելով ազատ տեղաշարժի ու դրա հետ կապված բազմաթիվ կենսական հնարավորություններից: Հերթական անգամ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը կոպտորեն խախտում է միջազգային իրավունքի նորմերը և 2020թ. նոյեմբերի 9-ի Եռակողմ հայատարադրությամբ ստանձնած պարտավորությունները:

➡ 2

Մենք հաղթելու ենք համախմբվածությամբ. Աղավնոյի համայնքապետ

«Արցախաբեւ»-ի թղթակցի հաղորդմամբ՝ իր խոսքում Անդրանիկ Չավուշյանն ընդգծել է, որ փրկությունը միասնականության մեջ է: Նրա խոսքով՝ շատ ազնիվ հայրողներ կան Հայաստանում, Սփյուռքում, Արցախում: «Մենք հաղթելու ենք համախմբվածությամբ: Մեր ճակատագիրը մեկն է, իսկ փրկությունը՝ մեր միասնականության մեջ», -ասել է Ա. Չավուշյանը՝ նշելով, որ պահելու և պահպանելու են Աղավնոյի խորհրդանիշը՝ հավատացած, որ Հայոց Եռագույնը մի օր ծածանվելու է այնտեղ:



Մեր ժողովուրդը ցույց տվեց ինչպիսի վճռականություն է ցուցաբերում հանուն իր իրավունքների ու հայրենիքի. Լեռնիկ Հովհաննիսյան

Չեն կասկածում, որ մեր ժողովուրդը նորից կվերադարձնի 88-ի Շարժման ոգին և կկարողանա միասնականությամբ, կամքով, համբերությամբ, դժվարությունները հաղթահարելով հասնել իր բաղձալի նպատակին:

➡ 2

Հայոց Հայրապետը տեղեկացրեց նաև, որ բոլոր եկեղեցիներում, ինքնացուց կիրակնօրյա Սուրբ Պատարագների, կկատարվի խաղաղության աղոթք հանուն Արցախի:



Ընկան տղերքը, որ հողը մնա-2

Սկիզբը՝ թիվ 22-ում
Ջ. ԸՌԲՈՅԱՆ

Մեկ շաբաթ անց Բերդաձոր հասանք նույն խմբով արդեն ուղղաթիվով եւ Նոր Հաճնի ջոկատի տղաների հետ: Մոտ 5 ամիս մնացինք Բերդաձորում: Մեր ջոկատով միացանք Բերդաձորի Ծաղկաձոր գյուղի տղաներին, ովքեր հիմնականում բնակվում էին Նոր Հաճնում եւ Աբովյանում, սակայն եկել էին հայրենի երկիրն ու իրենց ծնողներին, պապ ու տատերին պաշտպանելու: Այն ժամանակ Ծաղկաձորը, Կանաչ Թալան Եղցահող համայնքի կազմում էին: 3 գյուղերն ունեին գյուղխորհրդի գրասենյակ, որը ղեկավարում էր Արտուշ Զախարյանը, ով բնակվում էր Ծաղկաձորում, եւ ում տանը մենք սնվում էինք: Մեզ հետ էին նաեւ Արտուշի որդիները՝ Այոշան ու Արթուրը, Իսախանյան եղբայրները՝ Սերժիկն ու Ռուդիկը, Շիրակ Չոբանյանը, Գագիկը:

➡ 3

1 ← Արցախի ժողովրդի կոչ-ուղերձը

Արցախի և Հայաստանի միջև ցամաքային ճանապարհի անխափան գործարկումը չի կարող լինել ուրև բանակցությունների և սակարկման առարկա: Արցախը արտաքին աշխարհին կապող հաղորդակցությունը պետք է առանց նախապայմանների ու անհապաղ վերականգնվի և պայմաններ ստեղծվեն դրա հետագա անխափան գործունեությունն ապահովելու համար: Հայ ժողովրդի հանդեպ Ադրբեջանի կողմից իրականացվող էթնիկ գոտիների և խտրական քաղաքականությունը, որը նոր թափ է ստացել 2020թ. աշնանը մեզ պարտադրված պատերազմից ու դրա թողած աղետաբեր հետևանքներից հետո, նպատակ ունի հայաթափել հայկական Արցախը՝ շարունակելով 1915թ. Թուրքիային կողմից Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանության բեմագիրը: Իր պատմական հայրենիքում ազատ և անկախ ապրելու համաժողովրդական կամքն է 1988 թվականին հենց այս հրապարակից ուղղորդել մեր ժողովրդին ազատագրական պայքարի, որի արդյունքում մենք ունենք միջազգային իրավունքի նորմերին համապատասխան հռչակված ինքնիշխան պետություն և նրա կենսունակությունն ապացուցող քաղաքական, տնտեսական ու սոցիալական տեսանելի ձեռքբերումներ: Այսօր, երբ վտանգված է համայն հայության երազանք Արցախի Հանրապետության լինելիությունը, մենք, խոնարհվելով մեր ազատագրական պայքարի ճանապարհին իրենց կյանքը նվիրաբերած հայորդիների հիշատակի առջև, վերանորոգում ենք մեր ուխտը՝ մեր սուրբ նահատակների գործը շարունակելու և մեր արժանապատվությունը վերականգնելու համար: Շարունակվող պայքարի ընթացքում մենք, ինչպես նախորդ տարիներին, այսօր էլ ունենք մայր Հայրենիքի և համայն հայության համակողմանի աջակցության կարիքը:



Անցած տարիներին Արցախը եղել է հայկական ինքնության և արժանապատվության խորհրդանշել: Այսօր, երբ հայկական երկրորդ հանրապետությունը կանգնած է նոր մարտահրավերների առջև, Արցախը պետք է դառնա այն առանցքը, որի շուրջ պետք է միավորել համազգային ներուժը: Արցախի Հանրապետության ապագան համազգային նշանակության հարց է և պահանջում է համահայկական համախմբում ու համերաշխություն: Արցախի Հանրապետությունը շարունակելու է ջանքեր գործադրել իր ժողովրդի անվտանգությունն ու պաշտպանունակությունը ամրապնդելու համար՝ համադրելով սեփական կարողություններն ու Ռուսաստանի Դաշնության Խաղաղապահ առաքելության հնարավորությունները: Արցախի Հանրապետությունը՝ որպես միջազգային հիմնարար իրավունքների գերակայությամբ առաջնորդվող պետություն, շարունակելու է հավատարիմ մնալ համամարդկային արժեքներին և լինել կառուցողական: Ծավալապաշտական նկրտումներն ու տնտեսական շահերը չպիտի թելադրող լինեն ժամանակակից միջազգային հարաբերություններում: Արցախն աշխարհի քարտեզի վրա այն կետն է, որից, ինչպես 1988 թվականին, կարող է սկիզբ առնել 21-րդ դարի՝ բարոյական աշխարհակարգի ձևավորումը: Ք. Ստեփանակերտ 25 դեկտեմբերի, 2022թ.»:

1 ← Մեր ժողովուրդը ցույց տվեց...

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած համաժողովրդական հանրահավաքի ժամանակ այս մասին «Արցախաբլան»-ի թղթակցի հետ զրույցում ասել է Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարի տեղակալ, պատմաբան Լեոնիկ Հովհաննիսյանը: «Ի վերջո, այսպիսի միջոցառումները միանշանակ ուղղված են միասնականությանը: Մեր թշնամիներն ասում են, թե Արցախում ընդամենը 20-30 հազար մարդ է ապրում, իսկ այսօր մեր ժողովուրդը ցույց տվեց իրականում ինչքան մարդ է ապրում Արցախում և ինչպիսի վճռականություն է ցուցաբերում հանուն իր իրավունքների ու հայրենիքի», - նշել է Լ. Հովհաննիսյանը:



«Այս գործընթացն օբյեկտիվ է, անխուսափելի, բարդ, մարտահրավերներով ու ցնցումներով լի»



Աշխարհաքաղաքական ֆորմատավորման նոր փուլ է սկսվել մի շարք առանցքային աշխարհաքաղաքական տարածքներում: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է Դավիթ Բաբայանը: Այս գործընթացը օբյեկտիվ է, անխուսափելի, բարդ, մարտահրավերներով ու ցնցումներով լի: Դա պահանջում է ստուսարտություն, ճկունություն, քաջություն, հայրենասիրություն և պրոֆեսիոնալիզմ: Պետք է հնարավորինս զերծ մնալ հիմարությունից, դեմագոգիայից, սադրանքից: Աստված մեզ օգնական:



ՆԱՄ նախագահ Ն. Հարությունյանը շնորհավորեց կայացած երեկոյի համար շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին եւ իր ղեկավարած կառույցի կողմից գրքեր, տեսաերկեր նվիրեց Թումանյան թանգարանին: Հայ մշակույթի զարգացման գործում ունեցած դերի համար Թումանյան թանգարանին պարգևատրեց իրենց կառույցի խորհրդանիշով՝ փոքր տուֆակերտ խաչքար: Երեկոյին մասնակցում էր նաեւ ՀԱԵ վիրահայոց թեմի նախկին առաջնորդ, Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն գերաշնորհ տեր Կազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ով ամփոփեց ցուցահանդես-համերգը Տերունական արդթքով: Ուրախություն հայտնեց, որ տարիներ անց կրկին լսեց Թումանյանի խոսքերով գրված երգերը: Շնորհակալություն հայտնեց «Նարեկացի» միությանը, Դանիել Երաժիշտին, Թումանյանի թանգարանի տնօրինությանը, «Նովա» խմբի երիտասարդ կատարողներին, որ նման պահեր պարգեւեցին իրեն ու ներկաներին: Անդրադարձավ վիրահայոց թեմի եւ Թիֆլիսում գտնվող Թումանյանի տան համագործակցությանը, գորակցություն հայտնեց այժմ շրջափակման մեջ գտնվող արցախահայությանը: Երեկոյին ներկա էին նաեւ տեղահանված քաջաբացիներ:



Թումանյանը երգերում

«Երաժշտությունը՝ ամենանուրբն ու ամենասուրբը, ամենաթանկ բանը, ինչ որ կա աշխարհում ու կյանքի մեջ...»:

Հովհ. Թումանյան

Երեանի Հովհաննես Թումանյանի թանգարանը մշտապես է հանդես գալիս շատ հետաքրքիր մշակութային միջոցառումներով եւ մեկտեղում արվեստի նշանավոր գործիչների, խմբերի: Օրերս թանգարանում կայացավ «Երգի թեմերով» (Հովհ. Թումանյանը երաժշտության մեջ) ցուցահանդես-համերգային երեկոն, որին ներկա էին Թումանյանի խոսքի երկրպագուներ, երաժիշտներ, արվեստասերներ... Համերգային մասով հանդես եկավ «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հովհիկ Սահակյան, դիրիժոր՝ Հեթերտ Ասատրյան):

Հովհ. Թումանյանի թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանը ողջունեց ներկաներին եւ անդրադարձավ դաիլիճում կազմակերպված ցուցադրությանը, որտեղ հիմնականում Թումանյանի «Անուշ» պոեմը երաժշտական ստեղծագործություններում պատկերող տարբեր տարիների ցուցապատումներ են: Ներկայացված են նաեւ Թումանյանի ստեղծագործությունները երաժշտարվեստում օգտագործած հայ ու միջազգային երգահանների մասին պատմող լուսանկարներ, նյութեր, այլ ցուցանմուշներ:



Ա. Եղիազարյանը տեղեկացրեց՝ ցուցադրությունում կարեւորվում է «Անուշ» օպերան, որի 110-ամյակը լրացավ այս տարի: Շնորհակալություն հայտնեց այն կազմակերպություններին, որոնք աջակցել են այս կարեւոր մշակութային միջոցառումն իրողություն դարձնել: Կարեւորեց հանրապետության «Նարեկացի» արվեստի միության (ՆԱՄ) դերը, որի ղեկավար Նարեկ Հարությունյանը նույնպես ներկա էր, հայ ջութակահար, դիրիժոր, երաժշտագետ, հասարակական գործիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դանիել Երաժիշտ արվեստագետին, ով իր ելույթում հանգամանակից ներկայացրեց Թումանյան-երգահաններ համագործակցությունը: Դանիել Երաժիշտը նախ խոսեց հանճարեղ Թումանյանի՝ երաժշտասեր լինելու մասին: Այլա անդրադարձավ ժամանակաշրջանի հայ մեծագույն մյուս արվեստագետ Կոմիտասի ու Թումանյանի թե բարեկամական եւ թե մշակութային համագործակցությանը: Այսպես՝ մի անգամ Թումանյանը դիմել է Կոմիտասին՝ ասելով. -Կոմիտաս՝ ցան, եթե վեղար չունենալիր, ես կուզենայի լինել Կոմիտաս: -Վեղար չունեմ, Օհաննես, խիտ մազերս վեղարի տեղ ես ընդունում,-պատասխանել է Կոմիտասը ծիծաղելով, եւ նրանք համբուրվել են... Ահա այսպես է եղել ժամանակի հայ մեծերի հարաբերությունը: Եվ այս երկխոսությամբ զգացվում է՝ ինչքան է Թումանյանը սիրել երաժշտությունը:



Դ. Երաժիշտը տեղեկացրեց նաեւ, որ տասնյակ այլազգի երգահաններ ու երաժիշտներ են ժամանակին Թումանյանի բանաստեղծություններն ու պոեմները, հատկապես «Անուշը» դարձրել երաժշտական արվեստի մաս: Հովհ. Թումանյանի պոեզիայի համամարդկային հնչեղության մասին են վկայում բազմալեզու թարգմանությունները, ինչպես նաեւ թարգմանությունների հիման վրա ստեղծված երգերը: Դրանցից են խորհրդային շրջանի կոմպոզիտորներ Դմիտրի Կաբալենկոյ եւ Մոխիել Վայնբերգի ռոմանսների շարքերը: Կարեւորվեցին պոետի մանկական ստեղծագործությունները, որոնք նույնպես շատ են օգտագործվել երաժշտարվեստում, թարգմանվել են տարբեր լեզուներով: Այսպես՝ Թումանյանի ստեղծագործությունների երաժշտականությունը մշտապես գրավել է երգահանների ուշադրությունը՝ ծնունդ տալով ամենատարբեր ժանրի երաժշտական գոհարների՝ օպերա, բալետ, սիմֆոնիկ ստեղծագործություններ, ռոմանսներ, մեներգեր եւ այլն: Դանիել Երաժիշտի խոսքից հետո ելույթ ունեցավ «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը: Առաջինը հնչեց Կոմիտասի «Սուրբ-Սուրբ»-ը: Հովհ. Երաժիշտը հնչեց ֆլեյտահար Ռաֆիկ Մկրտչյանի մենակատարությամբ: Թումանյանի խոսքերով գրված, Կոմիտասի կողմից երգ դարձրած «Կաքավի երգը» հրաշալի կատարեց «Նովան»: Իսկ «Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վըրա...» երգը, որի երաժշտության հեղինակը նույնպես Թումանյանն է, հնչեց երկու անգամ: «Նովա» խմբի մեներգիչ Արման Առաքելյանը հրաշալի կատարեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից «Բարձր սարեր, այ սարեր...» հատվածը: Հնչեցին նաեւ այլ երգեր՝ Կոմիտաս, Տիգրան Մանսուրյան եւ այլն:

Մեկ շաբաթ «ԵՐԳԻ ԹԵԻՆԵՐՈՎ...» (Թումանյանը երաժշտության մեջ) համերգային երեկոյին Հովհ. Թումանյանի թանգարանում հյուրընկալվեց «Գեղարդ» երգեցիկ խումբը՝ գեղարվեստական ղեկավար Մհեր Նավոյանի գլխավորությամբ, կոնցերտմայստեր՝ ԵՊԿ պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյան: Գեղարվեստական ղեկավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Նավոյանի խոսքից հետո հայ հանրաճանաչ կոմպոզիտորների՝ Թումանյանի գործերի հիման վրա գրված երգերի կատարումներով հանդես եկան խմբի մենակատարները՝ Լուիզա Երեմյանը, Մերի Մարտիրոսյանը, Տաթև Թադևոսյանը, Անի Սիմոնյանը, Մարիցա Թիվիլյանը և Անահիտ Գաբրիելյան: Հնչեցին Կոմիտաս, Արմեն Տիգրանյան, Անտոն Մայիլյան, Ռոմանոս Մելիքյան, Ալեքսանդր Հարությունյան, Էդուարդ Աբրահամյան, Էդգար Հովհաննիսյան, Հենրիկ Անասյան, Վարդ Մանուկյան: Հովհ. Թումանյան թանգարանի տնօրեն Ա. Եղիազարյանը տեղեկացրեց՝ այս համերգով իր ղեկավարած թանգարանը հանդես եկավ 2022թ. մշակութային վերջին միջոցառմամբ: Հավելեց՝ տարին եղել հաջողված թանգարանի համար:

Պատրաստեց Վ. Ընդոյանը

1 «Ընկան տղերքը, որ հողը մնա-2

Այդ ժամանակ Ծաղկաձորում փորձում էին կառուցել Նոր Հաճնում գործող ճշգրիտ քարերի գործարանի մասնաճյուղը։ Նշաձա տղաներն աշխատում էին Նոր Հաճնի գործարանում և եկել էին իրենց գյուղում հիմնելու աշխատատեղ, որը այդպես էլ չիրականացավ։ Իհարկե, հիմնական նպատակը գյուղի պաշտպանությունն էր։ 1990թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին բազում իրադարձություններ տեղի ունեցան Բերդաձորում։ Թշնամին մշտապես գիշերային հարձակումներ էր կատարում, ընթացքում տարան Եղցահողի կոլտնտեսության մոտ 300 կովերը։ Այս անգամ բավարարվել էին անասնապահներին ծեծելով միայն։



Շուշիի պարետը՝ խորհրդային բանակի մայոր, եկավ, խոստացավ՝ հետ կբերեն անասունները, սակայն դա հերթական տուտ խոստումն էր։ Ի պատասխան թուրքերի գողության՝ մենք էլ պահեցինք Կանաչ Թալա գյուղի թուրքերի այծերը (թեթ չեմ սխալվում, 18-ն էին), որոնք մշտապես իջնում էին մեր գյուղի տարածք։ Ցանկացանք դրանք տալ գյուղերի բնակիչներին, սակայն ոչ ոք չուզեց իր տանը պահել այսպես ասած՝ «հարամ» ապրանք։ Ստիպված բաց թողեցինք այծերը, մի քանիսը միայն մորթեցինք շտաբների (յուրաքանչյուր գյուղում կար 1 շտաբ) համար։ Հաճախ էին Շուշիի ոստիկանության աշխատակիցները խորհրդային զինվորների պաշտպանությամբ, գալիս Բերդաձոր, Ծաղկաձոր՝ համոզելու բնակչությանը, որ հանձնեն զենքերը, հետագային ազատամարտիկներին եւ այլն։ Լաչին-Շուշի ճանապարհին անցնում էր Ծաղկաձորով՝ մեր շտաբի տակով։ Երբեմն պայթուցիչներ էին շարտում թուրքերը՝ անցնելով մեր շտաբի մոտով։ Մենք հիմնականում գյուղի տարածքը հսկում էինք գիշերները, իսկ ցերեկները որոշ ժամանակ հանգստանում էինք մեր շտաբում, հետո մտնում մոտակա անտառ, որպեսզի չերեւանք թուրքերի ու խորհրդային զինվորականների աչքերին։ Մի քանի օր էլ աշխատեցինք. մոտ 3 կմ հեռու գտնվող աղբյուրի ջուրն առվակով հասցրեցինք գյուղ։ Այցելում էինք ենթաշրջանի մնացած գյուղեր, ծանոթացանք այլ ջոկատների տղաների հետ, ընկերացանք, հարազատացանք։ Այդ օրերին նաեւ հարսանիք եղավ Եղցահողում։ Ամբողջ Բերդաձորը մասնակից եղավ ուրախ տոնախմբությանը։ Ընթացքում եղավ նաեւ պահ, որ գյուղում սննդի պակաս զգացվեց, ՀԱԲ-ի կազմի մեր ջոկատի հրամանատար Իշխանն ուղղաթիռով սնունդ բերեց, մի քանի օր մնաց մեզ հետ։ Նոյեմբերի 14-ին հերթական անգամ Ծաղկաձոր եկան Շուշիի ոստիկաններն ու խորհրդային զինվորները։ Եկել էին հսկելու թուրք բանվորներին, ովքեր մեր գյուղից պետք է բնական զազ հասցնեին Կանաչ Թալա։



Գյուղի գազատար խողովակն անցնում էր մեր շտաբի պատի տակով, որտեղ էլ թուրքերը եռակցման աշխատանք էին կատարում։ Մտածեցինք, թե ընթացքում նաեւ անձնագրային ռեժիմի ստուգում կիրականացվի, բայց չեղավ։ Այդ օրը ուրբաթ էր, եւ վերջացել էր նաեւ մեր հերթապահության ժամկետը, եւ ես, Արթուրը, Ստեփանն ու Արսենը պետք է վերադառնայինք Երեւան։ Այդ ժամանակ յուրաքանչյուր ուրբաթ օր ավտոբուս էր աշխատում Ստեփանակերտից Բերդաձոր եւ հակառակ ուղղությամբ։ Ավտոբուսն ուղեկցում էին խորհրդային բանակի զինվորականները՝ դիմաց եւ հետեւից գնում էին մեքենաներ՝ զինվորներով լի կամ զրահամեքենաներ, իսկ ավտոբուսի մեջ նստում էին 3-4 ավտոմատավոր զինվորներ։ Այնուամենայնիվ՝ Լիսազորում, Զարիսլիում, Շուշիի մոտակայքում թուրքերը մշտապես քարկոծում էին վարորդ Կազիֆի «ՊԱՁ» ավտոբուսը, երբեմն՝ գնդակոծում, մեքենաներ թշուր վրան եւ այլն։ Երբ շարժվեց մեր ավտոբուսը դեպի Ստեփանակերտ, հետեւից եկավ նաեւ արքերջանցի ոստիկանների «Վիլիսը»։ Մտածում էինք, որ հնարավոր է՝ Շուշիի տակ մեզ իջեցնեն, քանի որ տեսել էին, որ նստել ենք ավտոբուս։ Բարեբախտաբար, նման բան չեղավ։ Հասանք Ստեփանակերտ, գիշերեցինք Գազիկենց տանը։ Երեկոյան պետք է լուծեինք հացի խնդիրը։ Մի քանի ժամ պտտվեցինք հացի գործարանի պատերի տակ, մինչեւ հաջողվեց հաց ճարել։ Հաջորդ օրը պետք է Արսենին ու Ստեփանին ուղարկեինք Երեւան, իսկ ես ու Արթուրը որոշել էինք մի քանի օր մնալ, այցելել Գանձասար ու Ամարաս։ Ամռանը, երբ մեզ Ստեփանակերտի օդանավակայանում տարան պարետատուն, նաեւ գրանցեցին մեր անուն-ազգանունները, որ այլեւ Ստեփանակերտ չայցելեք. բռնվելու դեպքում կկալանավորվեինք։ Օդանավակայանում ենք. շատ ուղետուրներ կան, իսկ օդանավն ուշանում է։ Նյարդայնացած են մարդիկ, սպասում են... Հաջողվում է ձեռք բերել 2 տոմս, բայց միեւնույն է՝ օդանավ հասնելը խնդիր էր։ Օդանավակայանի մուտքի մոտ հսկող խորհրդային զինվորը, չգիտեմ ինչ պատճառով, ձեռքի սարքից արցունքաբեր գազ էր փչել դիմացի ժողովրդի վրա, որոնց մեջ էր նաեւ հղի երիտասարդ մի կին։ Ամուսինը զինվորի գլխից հանեց գլխարկը եւ դրանով սկսեց հարվածել։ Այդ պահին մեր ընկերներից Արսենը, ով դեռ 17 տարեկան էր, սակայն բավականին հաղթանալով, մոտեցավ ու հարվածեց խորհրդային զինվորի կրծքին, որը հետ-հետ գնաց։ Մոտեցան այլ զինվորականներ, բայց, վախենալով երեւի բնակչության ցատումից, միայն հետ քաշեցին Արսենին ու կնոջ ամուսնուն։ Վերջապես մեր ընկերներին հաջողվեց մտնել օդանավակայան եւ նստել օդանավ, որի միայն թռիչքից հետո հետ գնացինք Ստեփանակերտ՝ վստահ, որ անփորձանք տեղ են հասնելու Արսենն ու Ստեփանը։ Երեկոյան ես ու Արթուրը Շահումյանի շրջան գնացող ավտոբուսով մեկնեցինք Գանձասար։ Զանապարհին գրուցեցինք վարորդի հետ, ծանոթացանք։ Իմանալով մեր ով լինելը՝ վարորդը ճանապարհաձախ չվերցրեց։ Իսպառնակներից հաշտություն կկայանալուքը ուղղով հասանք Վանք գյուղ։ Սոված էինք, ցանկացանք տարածքի սննդի կետերից մեկում հաց ուտել։ Ներս մտանք, 4-5 տղամարդ էին սեղանի շուրջ նստած։ Մեզ էլ իրավիճակն ասելով, որ այլ ուտելիք չկա։ Միասին ընթերցեցինք, մի քանի բաժակ թթի օղի վայեցեցինք, ծանոթացանք, երգեցինք։ Եղան նաեւ պարողներ։ Այդպիսի բարձր տրամադրությամբ բարձրացանք Գանձասարի վանք։ Արդեն մթնել էր, որ ծեծեցինք վանքի դարպասը, որը բացեց պահակը՝ նույն նպես գինովցած։ Հետաքրքրվեց՝ ո՞վ ենք, ի՞նչ գործ ունենք գիշերով վանքում։ Ներկայացանք, սակայն պահակը չէր ուզում ներս թողնել։ Այդ օրերին վանքում երեսանցի շինարարներ էին աշխատում. սկսվել էին հիմնանորոգման աշխատանքները, մնում էին վանքում։ Շինարարների դեկավար վարպետը, ով Ավան թաղամասից էր, նույնպես մոտեցավ եւ մեզ ներս հրավիրեց։ Ծանոթացանք, զրույցի ընթացքում տեղեկացանք, թե ինչ աշխատանքներ են կատարել։ Ընթերցեցինք, թեյ ու գինի ըմպեցինք։ Այդ ամբողջ ընթացքում գրեթե հարթած պահակն անհանգիստ էր. մեզ լրտեսի կամ ահաբեկիչի տեղ էր դրել։ Անընդհատ հարցեր էր տալիս։ Ստիպված ցույց տվեցի անձնագիրս։ Շինարար-վարպետը ջղայնացավ պահակի վրա, եւ վերջինս գիշերվա կեսին որոշեց տուն գնալ։ Առավոտյան շրջեցինք վանքի տարածքում, լուսանկարեցինք։

Դավիթ Էդուարդի Սարապյանը

Արցախյան շարժման առաջին օրերից շատ ցուցարարներ շուտ հասկացան՝ Արցախի ազատագրումը, Մայր հայրենիքին միավորումը խաղաղ ճանապարհով հնարավոր չեն։ Այն ժամանակ էլ, ինչպես այսօր, թե խորհրդային կենտրոնական իշխանությունները, թե միջազգային այսպես կոչված մարդասիրական ու արդարադատ կառույցները փակել էին աչք ու ականջ եւ միայն նայում էին կշեռքի ծանր կողմին... Ու եկավ գեներ վերցնելու, ջոկատներ կազմելու ժամանակը։ 1988-90-ական թթ. արդեն ճեւավորվում էին ռազմական ջոկատներ, եւ բազում հայրենասեր հայորդիներ ընդգրկվում էին դրանց կազմում եւ մեկնում Արցախ ու ՀՀ սահման։ Նման հայորդիներից էր Երեսանցի գրող Դավիթ Էդուարդի Սարապյանը, ով հետագայում ստացավ Դեռ մականունը։

1990թ. ընդունվել է հրամանատար Լեոնիդ Ազգալյանի «Անկախության բանակի» շարքերը, ապա՝ «Տիգրան Մեծ» ջոկատ ու շարունակել մարտական-հերոսական ճանապարհը մինչեւ 1991թ. դեկտեմբերի 10-ը, երբ մարտիրոսվեց Արցախի Շահումյանի շրջանի Թողան գյուղում։ Առաջին մարտական մկրտությունն ստացել է 1990-ին՝ ընդունվելով Հայոց նորոյա հերոս Լեոնիդ Ազգալյանի հրամանատարությամբ գործող «Անկախության բանակի» շարքերը։ Հետագայում Դավիթն արդեն «Մեծն Տիգրան» աշխարհագրային գնդի շտաբի պետ, պահեստագործի գնդապետ Մանվել Սերոբյանը տեղեկացրեց, որ «Մեծն Տիգրան» աշխարհագրային գունդը կամավորական զորագունդ է, որը կազմավորվել է 1989թ. 10-ից ավելի կամավորական ջոկատների հիման վրա։ Գունդն անցել է փառավոր մարտական ուղի. մասնակցել է ՀՀ եւ Արցախի գրեթե բոլոր թեժ կետերի մարտական գործողություններին։ Արցախյան առաջին գոյամարտի ժամանակ գունդը կորցրել է 30 ազատամարտիկ։



2022թ. դեկտեմբերի 14-ին դարձյալ մարդաշատ էր դպրոցի բակը, որտեղ կայացավ Դավիթ Սարապյանի կիսանդրու բացումը՝ հերոսի ծննդյան օրվա առթիվ։ Մինչ հանդիսավոր արարողության սկսվելը, զուգուցեցի կրթօջախի տնօրեն Անուշ Արեւյանի հետ։ Տեղեկացրեց, որ իր ղեկավարած դպրոցում, որը գործում է 1964-ից, այժմ սովորում են 425 աշակերտներ։ Մանկավարժների պակաս չունեն։ «Մեծն Տիգրան» աշխարհագրային գնդի շտաբի պետ, պահեստագործի գնդապետ Մանվել Սերոբյանը տեղեկացրեց, որ «Մեծն Տիգրան» աշխարհագրային գունդը կամավորական զորագունդ է, որը կազմավորվել է 1989թ. 10-ից ավելի կամավորական ջոկատների հիման վրա։ Գունդն անցել է փառավոր մարտական ուղի. մասնակցել է ՀՀ եւ Արցախի գրեթե բոլոր թեժ կետերի մարտական գործողություններին։ Արցախյան առաջին գոյամարտի ժամանակ գունդը կորցրել է 30 ազատամարտիկ։



Նրանց շարքում է 1991թ. դեկտեմբերի 9-ին Էրեբունի մարտիրոսված՝ գնդի առաջին շտաբի պետ Տիգրան Սարգսյանը, ով հետմահու պարգևատրվել է ՀՀ 1-ին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով։ Գնդի հիմնադիր հրամանատար Արմենակ Արմենակյանը, ով այսօր էլ մնացել է հավերժ հրամանատար, նահատակվեց 1999թ. հոկտեմբերի 27-ին։ Սարգիս Խալաֆյանը հերոսաբար զոհվել է 2016թ. ապրիլի 5-ին։ Արցախյան վերջին 44-օրյա պատերազմում «Մեծն Տիգրան» գնդից հերոսաբար նահատակվեցին 9 քաջորդիներ, կան անհայտ կորածներ։ Դավիթ Սարապյանի կիսանդրու բացման արարողությանը ներկա էին հերոսի մարտական ընկերներ, հարազատներ, ՀՀ ԵԿԿ անդամներ՝ վարչության նախագահ Սասուն Միքայելյանի գլխավորությամբ, Երեսանցի քաղաքապետարանի կրթության վարչության գլխավոր մասնագետ Հասմիկ Իսոյանը, Արցախի առաջին հրամանատարներից Արկադի Կարապետյանը՝ Ազոն, ինչպես նաեւ «Դավիթ Սարապյան» նախաձեռնության խմբի հիմնադիրներ, հերոսի կենսագիր, «Մեր օրերի Դավիթը» գրքի հեղինակ Էվելինա Մելքումյանը, «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի նախագահ Արմինե Պետրոսյանը, Դեմի կիսանդրու քանդակագործ, ազատամարտիկ Աղվան Մխիթարյանը, հյուրեր։ Դպրոցի փոխտնօրեն Թամարա Մկրտչյանը ողջունեց ներկաներին՝ հանդիսավոր արարողությունը համարելով բացված։ Հնչեց ՀՀ օրհներգը, այնուհետեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի ներկայացուցիչներ բարեշնորհ Արթուր սարկվազ Օհանյանը եւ Արշակ սարկվազ Պետրոսյանը Տերունական արդյթքով սկսեցին արարողությունը։ Դպրոցի տնօրեն իր ելույթում անդրադարձավ նախ անվանակրթության խնդրին, որը կայացել է «Դավիթ Սարապյան» նախաձեռնության խմբի անդամների՝ Սոֆյա Հովսեփյանի, Էվելինա Մելքումյանի, Անահիտ Պետրոսյանի, Էռնեստ Ավանեսովի, Մերի Կարապետյանի եւ այլ նվիրյալների ջանքերով։ Ասաց, որ ինքն ու իր ղեկավարած կրթօջախի անձնակազմը սիրով ու մեծ պատասխանատվությամբ են համաձայնել, որ դպրոցը կոչվի Դավիթ Սարապյանի անունով։ Շնորհակալություն հայտնեց նույն անձանց, որ այսօր էլ արդեն կայացավ հերոսի կիսանդրու բացումը։ Շնորհակալություն հայտնեց նաեւ Դավիթի մարտական ընկերներին՝ Արթուր Եփրեմյանին, Կարեն եւ Արմեն Գրիգորյան եղբայրներին, քանդակագործ Աղվան Մխիթարյանին եւ Տիգրան Սարգսյանին, ինչպես նաեւ Դավիթի եղբոր որդուն՝ Տիգրան Սարապյանին, ովքեր մշտապես աջակցել են թե անվանակրթության եւ թե կիսանդրու բացման գործերում, եւ հույս հայտնեց, որ նրանք մշտապես կմնան որպես դպրոցի բարեկամներ։

ԵԿԿ վարչության նախագահ Ս. Միքայելյանն իր ելույթում նույնպես շնորհակալություն հայտնեց արարողության կազմակերպիչներին եւ կարևորեց նման իրողությունները, որ մեր դպրոցականները պետք է լավ ճանաչեն հերոսներին, ովքեր 1990-ական թթ. կարողացան ազատագրել Արցախն ու հարակից տարածքները։ Այդ պատերազմի ժամանակ ունեցանք 8000-ից ավելի զոհեր, սակայն հպարտ էինք մեր հաղթանակով։ Ցավ հայտնեց, որ այսօր ունենք նման իրավիճակ, ինչի հիմնական մեղավորներից է մեր անմիաբանությունը։ «Մեծն Տիգրան» գնդի շտաբի պետ Մ. Սերոբյանը կարևորեց հերոսի կիսանդրու բացումը կրթօջախի մտքով։ «Բազում սերունդներ կանցնեն դպրոցի մուտքով՝ մինչ այդ նրանց կզիմավորի հերոսի կիսանդրին եւ կողջունի նրանց։ Մեր գնդի 40 նահատակներից է Դավիթը, ով հանդես է գալու բոլորի անունից...», -ասաց գնդապետ Սերոբյանը եւ շնորհակալություն հայտնեց այս կարևոր արարողության կազմակերպիչներին, դպրոցի տնօրինությանը, որ ցուցաբերեցին բարի կամք։ Դավիթի ընտանիքի բարեկամ եւ կենսագիր է. Մելքումյանը հերոսի կիսանդրու բացումը համարեց շատ կարևոր, որ գրող ու ստեղծագործող, ազատամարտիկ հերոսի կերպարն այսուհետ ավելի է ոգեւորելու դպրոցականներին։ Անդրադարձավ կատարված աշխատանքներին, որ սկզբում ցանկացել են Դավիթի անունով կոչել Երեսանցի Ձեռքիսկու անվան դպրոցը, որտեղ սովորել է նա, սակայն ինչ-ինչ պատճառներով չի ստացվել, եւ այժմ հերոսն ունի իր անվան կրթօջախ, որի բակում նրա կիսանդրու բացումը կայացավ։ Շնորհակալություն հայտնեց քանդակագործին, ով մեծ վարպետությամբ է կերտել հերոսին։ Իր խոսքում քանդակագործ Ա. Մխիթարյանը կիսանդրու բացումը համարեց պարտավորություն հերոսի հիշատակի առջեւ։

Ոգեկոչման արարողություն

1989թ. 10-ից ավելի կամավորական ջոկատների հիման վրա կազմավորված «Մեծ Տիգրան» աշխարհագրային գնդի առաջամարտիկ եւ հիմնադիրներից Սամվել Սերգեյի Բաղայանը՝ մարտական ընկերների շրջանում հայտնի Գուբերնատոր Սամվելը, վախճանվեց 2021թ. Իսպանիայում։ Նրա մահվան օրը՝ դեկտեմբերի 15-ին, Երեւանի Պեյո Յավորովի անվան թիվ 131 հիմնական դպրոցի դահլիճում կայացավ ոգեկոչման արարողություն, որը կազմակերպվել էր «Լեռք» ռազմակրթական հիմնադրամի կողմից՝ ի դեմս հոգաբարձուների խորհրդի նախագահ Արկադի Կարապետյանի, ով նույնպես մասնակից էր արարողությանը։



Արցախյան գոյամարտի ազատամարտիկը, ով արժանանում էր Գործնական Երկրորդ աստիճանի Մեծ Պատվոգրով, նաեւ պապերի հայրենիք Նախիջեւանը։ Ընկերները պատմում են՝ աւտոմոբիլով, որ կազմավորվեց Նախիջեւանը, եւ ինքը կղաղթեալ երկրամասի «գուբերնատորը»։ Այդ օրվանից Սամվելին կոչում էին Գուբերնատոր։ «Լեռքի» հոգաբարձուների խորհրդի անդամ, Ս. Բաղայանի մանկության ընկեր ու Արցախյան շարժման առաջամարտիկ, նախաձեռնության համակարգող Վարդանի Նիկողոսյանը ողջունեց ներկաներին, անդրադարձավ Սամվելի դերին պատերազմից հետո, որ զբաղվել է բարեգործությամբ, եւ նրա հիշատակի արարողությունը հայտարարեց բացված։ Հնչեց ՀՀ օրհներգը։ Թիվ 131 դպրոցի տնօրեն Նաիրա Զաքարյանը ողջունեց ներկաներին, կարեւորեց նման արարողությունները դպրոցներում, հատկապէս, որ Սամվելը եղել է նույն դպրոցի աշակերտը, եւ որպէսզի մատուց սերունդը ճանաչի իր հերոսներին։ Նշեց, որ հերոսի անունը այսօր չի տա, բանի որ այստեղ կարելի է երեւոյթը՝ մարդուն մարդ պահող հիշողությունը, երախտագիտությունը։ Հիշատակելով «Սասնա ծռեր» էպոսը՝ նշեց, որ մեզ ամենալավը բնորոշել է հենց ինքը՝ ժողովուրդը։ Մենք մեծ հարցերում՝ դիվանագիտության, օրինակ, շատ ազնիվ ենք, վարում ենք շիտակ քաղաքականություն, որը վնասում է հենց մեզ։ Բայց միգրացիոն հենց ազնվությունն է, որի համար օրհնված ենք որպէս ազգ։ Նշեց, որ մեր հերոսների մեջ կարելի է հատկանշիներինք են եղել սկզբունքայնությունը, ապրելու բանաձեւ ունենալը, ինչի շնորհիվ էլ այսօր կանք՝ անկախ մեր լավ ու վատ կողմերից։ Ներկաներին Սամվելի կենսագրականը ներկայացրեց քույրը՝ Ասյա Բաղայանը։



Հերոսը ծնվել է 1957թ. ապրիլի 15-ին Երեւանում։ Կրթություն ստացել է թիվ 131 դպրոցում (1964-74 թթ.)՝ զուգահեռ սովորելով Չայկովսկու անվ. երաժշտական դպրոցում։ Ավարտել է նաեւ Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանը եւ աշխատել պետական փողային նվագախմբում։ Ծառայել է խորհրդային բանակում՝ զինվորական նվագախմբում։ Արցախյան շարժման առաջին օրվանից դարձավ արցախահայության աջակից ու «Մեծ Տիգրան» ջոկատի կազմում առաջին փառավոր մարտական ճանապարհ։ Նա հայտարար էր իր պապերով, ովքեր եղել են Անդրանիկի ու Նժդեհի հավատարիմ զինակիցներ, մինչեւ 1937թ. հայկական են պահել Նախիջեւանի մի քանի տնային գյուղեր։ «Սամվելը երբեք որեւէ մեկի չի նեղացրել. նա եղել է շնորհալի հայ, լավ հայր ու ամուսին, եղբայր ու ընկեր», - ասաց քույրը։ Արցախյան գոյամարտի առաջամարտիկը մեծ օժանդակություն է ցուցաբերել 44-օրյա պատերազմի ժամանակ՝ առաջնագիծ հասցնելով հագուստ ու այլ անհրաժեշտ պարագաներ։ Նրա աջակցությամբ տեղի են ունեցել «Մեծ Տիգրան» աշխարհագրային գնդի 25-ամյա տարեդարձին նվիրված միջոցառումներ։ Սամվելի միջնորդությամբ ՀՀ Արմավիր եւ Իսպանիայի Կատալոնիա ինքնավար մարզի Լորետ դե Մար քաղաքները բարեկամացել են։ Այս քաղաքում Սամվելը նաեւ պորտակ էր հիմնել տեղի հայությանը միավորելու նպատակով։ Եվ նրա օժանդակությամբ քանդակվել է խաչքար՝ նվիրված հայ-իսպանական բարեկամությանը։



Խաչքարի քանդակագործ Արտակ Համբարյանը, որի քանդակած մոտ 50 հուշակոթող, հիմնականում խաչքար, տեղադրված են աշխարհի տարբեր երկրների քաղաքներում, ասաց՝ այս խաչքարում կան հայկական եւ իսպանական զարդանախշեր, խաչքեր։ Միջոցառման ընթացքում ցուցադրվեց ռեժիսոր Սամվել Թադեւոսյանի նկարահանած «Լուսի կամուրջներ» փաստագրական ֆիլմը՝ նվիրված նշված խաչքարի ստեղծմանը եւ Արմավիրից՝ Սարդարապատից, Իսպանիա ուղարկելուն։ Ֆիլմի ընթացքում հանդես են գալիս Սամվելը, նրա մարտական ընկերները, խաչքարի ճարտարապետը, այլը։ Քույրը հույս հայտնեց, որ եղբոր կիսատ թողածը Լորետ դե Մարում կշարունակի նրա որդին։ Այնուհետեւ Ասյա Բաղայանն ընթերցեց Սամվելի ընկեր Աշոտ Նազարյանի քառատողը՝ եղբոր հիշատակին։ Սամվելի մասին հուշեր պատմեցին մարտական ընկերները, բանաստեղծուհի Անահիտ Դանիելյանը նշեց՝ Սամվելին պետք է ավելի լավ ճանաչեն, բանաստեղծուհի Արփիկե Մանուկյանը ընթերցեց իր ծնը։ Ռեժիսոր Սամվել Թադեւոսյանն իր խոսքում ասաց՝ հաճախ դեպքերը մեզինց առաջ են ընկնում, եւ մենք չենք կարողանում իրագործել կարելիոր ծրագրեր, ինչպիսին որդեղ էր Սամվելը, ով արդեն մեր կողքին չէ։ Հավելեց նաեւ՝ ամենամեծ կորուստը հենց մարդու մահն է, որ հետ չենք բերի։ «Բայց ուրախ եմ, որ մենք Սամվելի մահվան օրը նշում ենք այստեղ, որ հոգու հանգստություն է նաեւ մեզ համար», - ասաց բազում նման ֆիլմերի հեղինակը եւ անդրադարձավ «Լուսի կամուրջներ» ֆիլմի ստեղծման պատմությանը։ Միջոցառմանը ներկա էին «Մեծ Տիգրան» գնդի շտաբի պետ, գնդապետ Մանվել Սերոբյանը, մարտական ընկերներ, դպրոցականներ։ «Մեծ Տիգրանի» դրոշով Սամվելի նկարի մոտ պատվի պահակ էր կանգնել զինվորականը։ Միջոցառման ընթացքում հնչում էին նաեւ ռազմախայրենասիրական երգեր։ Ընթացքում դպրոցի փոխտնօրեն Մարիամ Ոսկանյանի ուղեկցությամբ ծանոթացա Երեւանում թանգարան-դպրոց հայտնի կրթօջախի պատմությանը։

Հերոսների ոգին անմահ է

Այս տարվա նոյեմբերի 22-ին լրացավ Արցախյան գոյամարտի լեգենդար հրամանատարներից՝ Թիֆլիսիում ծնված Լեոնիդ Ռուբենի Ազգալյանի 80-ամյակը, իսկ 25-ին՝ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Վիսեյիայում ծնված Մոնթե Զառոֆի Մելքոնյան-Ավրի 65-ամյակը։ Հայոց նորոյա պատմության մեջ մեծ հետք թողած այս անմահ հերոսներն իրենց կյանքն ընդհատեցին Արցախի ազատագրական պատերազմում։ Արցախի հերոս Լեոնիդը նահատակվեց Մարտակերտի շրջանի իր իսկ ազատագրած Տոնաշեն գյուղում 1992թ. հունիսի 12-ին, իսկ Հայաստանի ազգային հերոս ու Արցախի հերոս Մոնթեն՝ ուղիղ 1 տարի անց Աղդամի շրջանի Մարզիկի կոչվող գյուղում։ Հերոսների հորեղյաններին նվիրված՝ նախօրեին «Անոն Բաբաջանյան» համերգասրահում «Կարին» ավանդական երգի-պարի խումբը՝ Գագիկ Գինոսյանի ղեկավարությամբ կազմակերպել էր համերգ, որը մեծ ոգեւորությամբ ընդունեց հանդիսատեսը։ Համերգը վարեց դերասան ու ասմունքող Արսեն Ղազարյանը, ով այն համարեց անմիջական զրույց հանդիսատեսի ու անմահ հերոսների հետ։ Նա համերգին մասնակից արեց նաեւ հայոց մեծերին՝ Մեակին ու Համո Սահյանին, Զարենցին ու Տերյանին... Հանուն հայրենիքի մարտիրոսված բոլոր հերոսներն են անմահ, եւ նրանց սուրբ հոգիները միշտ մեզ հետ են։ Գ. Գինոսյանը, ներկայացնելով Լ. Ազգալյանին, ում հրամանատարությամբ գործող «Ազատագրական բանակ» ռազմական կազմակերպության զինվորն է եղել ժամանակին, ասաց՝ Լեոնիդին հերոսի կոչում հայ ժողովուրդն է շնորհել։ 2019թ. օգոստոսի 31-ին, Արցախի Հանրապետության անկախության 28-րդ տարեդարձի առթիվ, Արցախյան ազատամարտի ընթացքում իրականացրած ռազմական գործունեության համար Լ. Ազգալյանին հետմահու շնորհվեց Արցախի հերոս կոչում եւ «Ոսկե արծիվ» շքանշան։



Լեոնիդը, մասնագիտությամբ լինելով ֆիզիկոս, ժամանակին նաեւ փորձել է Հայաստանում ռազմարդունաբերություն ստեղծել, զենք արտադրել, սակայն նրա նահատակությունը շատ բան փոխեց ի վնաս մեր ազգի։ Գ. Գինոսյանն անդրադարձավ նաեւ հերոսի՝ Արցախյան շարժման սկզբում իրականացրած գործողություններին։ Լեոնիդը հիմնում էր ազգային գաղափարներով բանակ, նրա զինվորները մարտադաշտ էին մտնում ազգային գաղափարով զինված։ 1990թ. փետրվարից վարել է «Անկախության բանակ» ռազմաքաղաքական կառույցի հրամանատարությունը։ Նա երբեք կրտակցական չի եղել։ Մի անգամ Արցախում արտասահմանցի մի լրագրող Լեոնիդին հարցրել է. «Ի՞նչ գույնի եք դուք, այսինքն՝ ո՞ր կուսակցության եք պատկանում...»։ Շնկաչք Լեոնիդը մի բոտ հող է վերցրել ու ասել. «Ահա իմ գույնը...»։ Նա կազմակերպել ու ղեկավարել է Խորհրդային Հայաստանի մի շարք շրջանների եւ հատկապես Վարդենիսի շրջանի ինքնապաշտպանական մարտերը, անձամբ մասնակցել բազմաթիվ ազատագրական մարտերի, այդ թվում՝ Նոնաձորի առաջին գործին, իսկ մայիսի 27-ի կայարանի եւ Սովետաշենի արյունալի սադրանքից հետո ծրագրել եւ իրականացրել է խորհրդային պատմիչ գործերի Երեւան ներթափանցման փորձի կանխումը։



Ազգալյանը հետագայում արդեն Արցախում էր՝ Շահումյան, Մարտակերտ։ 1991թ. հունիսին Հովսեփ Հովսեփյանի հետ ստեղծել է «Ազատագրական բանակ» ռազմական կազմակերպությունը, որի գլխավոր հրամանատարը մնաց մինչեւ իր կյանքի վերջը։ Գ. Գինոսյանը ներկայացրեց՝ համերգին ներկա էին նաեւ Լ. Ազգալյանի զինվոր-զինակիցներ, նրանցից 3-ը գնդապետի կոչում ունեն։ Ներկա էր նաեւ «Նիկոլ Դուման» ջոկատի հրամանատար Ալբերտ Բազեյանը։ Մոնթեն առաջին անգամ Հայաստան եկավ 1991թ.՝ ազատվելով ֆրանսիական բանտից։ Նոյեմբերին արդեն Արցախում էր Մոնթեն, ով ժամանակին եղել էր Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի զինվոր, Լիբանանի քաղաքացիական պատերազմի եւ Իրանի շահի դեմ պայքարի ակտիվ մասնակից։ 1992թ. Ստանձնում է Մարտունու պաշտպանական շրջանի շտաբի պետի պարտականությունը։ Նրա ղեկավարությամբ Մարտունին դարձավ Արցախի ամենապաշտպանված ու ամենամարտունակ շրջանը։ 1993թ., մինչեւ իր նահատակությունը, Ավոն, ով դարձել էր ողջ հայության հպարտությունը, իր զինվորների հետ մասնակցեց Իջեւանի ու Ճամբարակի շրջանների պաշտպանական մարտերին։ Արցախում ազատագրեց Քարվաճառը, մինչ այդ մասնակցեց նաեւ Արցախի Շահումյանի շրջանի մի քանի բնակավայրերի եւ Մարտակերտի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին։ Հերոսի նահատակությունից հետո Արցախի Մարտունի քաղաքը բնակչության կողմից անվանակոչվել է Մոնթեբերդ։ Ահա այս հերոսների ոգին էր տիրում համերգասրահում, որտեղ հանդես եկան «Կարինը», «Բեկոր»՝ ավանդական պարերի խումբը, «Ծովակ»՝ պարի ու երգի համույթը, «Քոհեմ»՝ զրականերաժշտական խումբը, անհատ կատարողներ Շուշան Պետրոսյանը, Արսեն Համբարյանը, Արսեն Գրիգորյանը՝ Մրոն, Դավիթ Ամալյանը, Աննա Խառատյանը, Սամվել Ռոփայանը, Քերոբ Հովսեփյանը։



Էջը՝ 2ոհրաբ Ըոչոյանի

Նոր բացահայտումներ Դվինում

Արդեն 2 անգամ խեցեղեն ուղարկել ենք և սպասում ենք լաբորատոր պատասխաններին: Սա կարեւորվում է նաեւ նրանով, որ Հայաստանում այդ հարցով զբաղվող միջազգային թիմ է ստեղծվում: Դվինը շատ հետաքրքիր հուշարձան է, որի մասին տասնյակ գրքեր ու ատենախոսություններ, հոդվածներ են գրվել, սակայն նախկին խորհրդային տարածքից դուրս այն հայտնի հնավայր չէ: Իտալացիների հետ համագործակցության նպատակներից մեկն էլ՝ Դվինը ճանաչելի դարձնել արտերկրում, որը կնպաստի Հայաստանի մշակույթի լուսաբանման բարձրացմանը»: Հարցին՝ ինչո՞ւ են որոշել աշխատել հենց իտալացիների հետ, Հ. Պետրոսյանը պատասխանեց. «Իտալացիների հետ արդեն 12 տարի է՝ աշխատում ենք, հատկապես «Մետաքսի ճանապարհի» հետ կապված, եւ շուտով լույս կտեսնի մեր առաջին գիրքը: Հատկապես Վայոց ձորում ենք շատ աշխատել: Իսկ Դվինը «Մետաքսի ճանապարհի» կարեւոր հանգույցներից մեկն է, հիմնադրումից շատ չանցած եղել է տարածաշրջանի խոշոր առևտրական կենտրոն, որտեղով անցնում էին առևտրական ճանապարհներ: Հաշվի առնելով սա՝ որոշեցինք նաեւ այն ներառել այդ ծրագրի մեջ»: Հ. Պետրոսյանը կարեւորեց Ֆլորենցիայի համալսարանը նաեւ այն առումով, որ այս գիտական ուսումնական հաստատությունն աչքի է ընկնում Հայաստանի հանդեպ իր դրական ու առանձնակի



Հատկապես այդ համալսարանի միջերկրածովյան մշակույթը հետազոտող գիտնականները շատ են հետաքրքրված Հայաստանով, եւ տարբեր արշավախմբեր, ՀՀ տարբեր վայրերում (ժամանակին նաեւ Արցախում) իրականացնում են պեղումներ ու հետազոտական աշխատանքներ: Սա խոսում է իտալացի ժողովրդի, նրա մշակույթի ու գիտական գործիչների՝ Հայաստանի հանդեպ հատուկ վերաբերմունքի մասին: Պեղումների մասնակից հնագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ասպիրանտ Համազասպ Աբրահամյանը տեղեկացրեց՝ աշխատում է «Դվինի հասարակ խեցեղենը» թեմայի վրա: Սկզբում անդրադարձավ քաղաքի «շուկայի» տարածքում արդեն 2 տարի հայ-իտալական արշավախմբի կատարած աշխատանքներին: Տեղեկացրեց, որ հիմնականում շերտագրական պեղումներ է կատարում Դվինի «շուկայի» տարածքում է «Ստորին բերդ»-ում: «Տվյալ պահին պեղումները «շուկայի» արեւմտյան հատվածում են իրականացվում հնագետ Տադևոսյան Վարդանեստվայի ղեկավարությամբ: Հայտնաբերվել է մի քանի շերտ՝ աղյուսի՝ վերին մասում քարե շարվածք: Արդեն պեղվել է սալահատակի հատվածը, որը գիտությանը հայտնի է որպես սյունասրահ, որտեղ առկա են ճարտարապետական խարիսխներ ու խոյակներ, որոնցից մեկը զարդանախշ է: Նոր պեղումների արդյունքում հայտնաբերվել են 2 բուրգի հիմքեր, որոնք միմյանց հետ կապված են եղել հաստ պարիսպ-պատով», - նշեց Հ. Աբրահամյանը: Նրա եւ պեղումների մասնակից հնագետ Վանիկ Եպիսկոպոսյանի հետ շրջեցինք հնավայրի տարածքում: Բլրի գագաթին, որտեղից երևում են Հայկական պարը, Գեղամա լեռները եւ տարածքի հարթավայրը, գտնվել է միջնաբերդը՝ հարակից շինություններով: Քաղաքի իյուսիսային կողմում եղել է Տիկնունի ամրոցը, որը նույնպես պաշտպանել է քաղաքը: Հ. Պետրոսյանը կարծում է, որ 5-13-րդ դարերում գոյություն ունեցած ու մշտապես գործած այդ սալահատակ տարածքը, որը գիտությանը հայտնի է որպես «շուկայի սյունասրահ», հնարավոր է՝ եղել է իջեանատուն, որի նմանը միջնադարյան Հայաստանում շատ կա: Հնարավոր է՝ մաքսատուն է, որովհետեւ տարածքից դրամներ են գտնվել: Շուկայի իյուսիսային հատվածում խոսքիցները պեղել են 12-13-րդ դարերի շերտը եւ այս տարվա համար նախատեսած աշխատանքներն ավարտել են, փակել հատուկ ծածկոցով, որպեսզի պեղված հատվածը չվնասվի անձրեւից, ձնից, քամիներից եւ այլ պատճառներով: 2023-ին կշարունակեն աշխատանքները: Մոտ օրերս ամբողջ հնավայրում կդադարեցվեն պեղումները, կփակվեն բացված հատվածները: Պեղումների բանվորական խումբը տեղացի բնակիչներից է կազմված: Արդեն 1 տարի է՝ ստեղծվել է «Դվին» արգելոցը, որի վարիչն է Վահան Հովսեփյանը, որի հրավերով պեղումների աշխատանքին եւ Դվին մայրաքաղաքի մասին որոշակի պատկերացում ունենալու համար հնավայր այցելեցին Հնաբերդ գյուղի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտները՝ տնօրեն Վարսիկ Եղիազարյանի եւ պատմության ուսուցչուհի Սվետա Արամյանի գլխավորությամբ: Այս հատվածի պեղումների ղեկավար Տադևոսյան Վարդանեստվան ներկայացրեց պեղումների նպատակը, պեղավայրի պատմությունը: Աշակերտները գոհ մնացին: Հնավայրի տարածքում որոշված է կառուցել թանգարան, որտեղ կցուցադրվեն տարիների ընթացքում կատարված պեղումներից հայտնաբերված գտածոները: Իհարկե՝ հնավայրի տարածքում անցած դարում պեղումներ կատարած հանգետների, թանգարանի ու լաբորատորիայի համար տեղադրել են փայտաշեն տնակներ, որտեղ այժմ էլ նյութերի որոշ մասը ցուցադրվում է բացօթյա տարածքում: Հիմնական ցուցանմուշները Հայաստանի պատմության թանգարանում են, սակայն կարելու է, որ տեղում ցուցադրվեն դրանք: Հնավայրի հսկիչ Կորյուն Տիգրանյանը տեղեկացրեց՝ սկզբում իր պապն է եղել «Դվինի» հսկիչը, հետո՝ հայրը, 1990-ից՝ ինքը: Սիրով են պահպանում հայոց պատմության մեջ կարեւոր դեր ունեցած մայրաքաղաքից մնացած մասունքներն ու ավերակ կառույցները: Դվինը ժամանակին տարածված է եղել ներկայիս Հնաբերդ, Վերին Արտաշատ, Դվին, Վերին Դվին, Նորաշեն եւ Այգեստան գյուղերի որոշակի հատվածներում, եւ հնարավոր է՝ քաղաքի պատմական կառույցներ գտնվեն այս տարածքներում եւս: Այդ նպատակով թանգարանի կառուցման համար նախատեսած տարածքում 20մ երկարությամբ, մոտ 3մ լայնությամբ, 1,5 մ խորությամբ հետախուզական խրամատ են բացում: Այցի ժամանակ հնագետներ Նժդեհ Երանյանը (Հայաստանի պատմության թանգարանի փոխտնօրեն), Ռուբեն Հովսեփյանը եւ Վանիկ Եպիսկոպոսյանը բանվորների հետ այդ աշխատանքով էին զբաղված: Բացված տարածքից միայն խեցեղեն էր գտնվել եւ մի կտոր երկաթի խայր: Դվինը հնուց ի վեր հայտնի է եղել նաեւ որպես մետաղագործական խոշոր կենտրոն: Այն հայոց գործի գինապահեստն էր: Մի քանի օրից կպարզվի՝ այդ հատվածում կկառուցվի՝ թանգարանի նոր շենքը:



Սկիզբը՝ 23-ում

Էջը՝ Հոհրաբ Ընդոյանի

Զավախք աշխարհի Կորիս գյուղը

Կուր գետի Փարվանա կամ Թափարվան կոչվող վտակն անցնում է Զավախք աշխարհի պատմական Կորիս գյուղի հարավային կողմում գտնվող խոր ու գեղատեսիլ կիրճով, իսկ Թափարվանի վտակ Արագվան՝ գյուղի արեւմտյան կողմի կիրճով: Այնուհետեւ միանում են ու Խերթվիսի գյուղի մոտ լցվում Կուր: Այս գեղատեսիլ կիրճերի ափերին է Կորիքը: Մշտապես հայաբնակ գյուղը Վրաստանի Սամցխե-Ջավախք մարզի Ախալքալաքի շրջանում է՝ շրջկենտրոն Ախալքալաք քաղաքից 6-7 կմ հյուսիս-արեւմուտք՝ ծովի մակարդակից 1660-1700 մ բարձրության վրա: Հիմնականում 1828-30թթ., երբ կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, Արեւմտյան Հայաստանի տարբեր վայրերից հազարավոր ընտանիքներ գաղթեցին Արեւելյան Հայաստանի ու Զավախքի այն բնակավայրեր, որոնք հայաթափ էին եղել 16-րդ դարավերջին ու 17-րդ դարասկզբին՝ պարսից շահ Աբասի արշավանքների ժամանակ: Կորիս գյուղն էլ գրեթե հայաթափ էր եղել: Ըստ արխիվային տեղեկությունների՝ 25 տուն (270 շունչ) 1830թ. Կորիս է փոխադրվել Արեւմտյան Հայաստանի Երկան Մասուր կամ Երկայնմասուր (ըստ Ս. Կարապետյանի՝ Երկան Մանսուր) գյուղից, որն Արեւմտյան Հայաստանում էր՝ Էրզրումի վիլայեթի Էրզրումի գավառում՝ Սերջեմ եւ Շողանլու գետերի կիրճերի միջեւ: Մի քանի ընտանիք էլ Երկայնմասուրից վերաբնակվել է Զավախքի Օլավերո գյուղում: Վերաբնակիչների հաստատման պահին Կորիսն ունեցել է նաեւ 12 տուն բնիկ հայ բնակչություն: Հուշարձանագետ Սամվել Կարապետյանը, վկայակոչելով վրացական ու հայկական, այլ արխիվային նյութեր, «Զավախք» գրքում Կորիսի մասին հիշատակում է. «Համաձայն 1595թ. թուրքական կառավարության կազմած հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 19 տուն, հարկվել է 12.000 ակչե (հարկաչափ): Ուշագրավ է, որ Կորիսի գրեթե բոլոր տնատերերը կրում էին հայկական կամ հայոց շրջանում լայն տարածում ստացած անձնանուններ (օրինակ՝ Աթաբեկ, Կիրակոս, Մկրտիչ, Սարգսի որդի Հովհաննես, Սարգիս, Աստվածատուրի որդի Կիրակոս...): Հայտնի է, որ 1899թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետեանքով Կորիսի բնակելի 84 տներից 7-ը քանդվել է:



Գյուղը հայտնվել է 1901թ. կազմված Զավախքի կարիքավոր գյուղերի ցուցակում: Կորիսի գյուղատնտեսությունը լուրջ վնաս է կրել նաեւ 1899-1900թթ. հացի բզեզից եւ հոտենտոտյան մուկից: Աղետի հետեանքների թուլացման նպատակով ստեղծված կառավարական կոմիտեի կողմից օրհասական վիճակում հայտնված գյուղը մտցվել է առավել տուժած բնակավայրերի շարքը: Կորիս գյուղում է ծնվել, հասակ առել, դպրոցն ավարտել այժմ երեանաբնակ հարեանս՝ Գեուրգ Անդրանիկի Բասենցյանը, ում հրավերով մեկնեցինք Զավախք: Հյուրընկալվեցինք Գեուրգի եղջանակիչաւտակ Սամսոն Խորշիկյան քեռու տանը, որտեղ այժմ բնակվում են Սամսոնի կինը՝ Քնքուշը (Էթերի), որդին՝ Յուրին, 2 որդիների՝ Սամսոնի եւ Լեւոնի հետ: Վերջերս են Մոսկվայից վերադարձել հայրենիք: Յուրին հպարտությամբ ասում է, որ տունը կառուցվել է 1962թ. Համբարձում պապի կողմից եւ այժմ պատկանում է նրա բուրդ թռններին: Համբարձումի Նահապետ հայրը՝ գյուղի այն ժամանակվա հերոսներից առևտրական Ալեքսան Խորշիկյանի որդին, ծնվել է 1887թ., մանուկ հասակում հոր հետ զբաղվել առևտրով, շփվել գրագետ մարդկանց հետ եւ ուսանել Թիֆլիսի Ներսիսյան ճեմարանում:



1909թ. Կորիսի Աջկենց օդայում սկսել է դասավանդել գյուղի երեխաներին ու անգրագետ տարեցներին, ովքեր ցանկացել են կարդալ-գրել իմանալ: Յուրին հպարտությամբ է խոսում նաեւ ավագ քրոջ՝ Կալինայի մասին, ով վրացերենի մասնագետ է եւ դասավանդում է հարեան Բուղաշենի եւ Բալխո գյուղերի հանրային դպրոցներում: Վերջերս նշանակվել է Բալխոյի դպրոցի փոխտնօրեն: Կալինայի ամուսինը՝ Լեւոն Մելքոնյանը, մաթեմատիկայի ուսուցիչ է: Շատթացա Կորիս գյուղին, նրա պատմությանը, գրուցեցի գյուղապետ Գառնիկ Նանդիյանի հետ, ով 2 տարի առաջ է համագյուղացիների կողմից ընտրվել: Տեղեկացրեց, որ այժմ Կորիսում կա 98 հայ ընտանիք՝ ընդհանուր 406 բնակչով: Ժամանակին գյուղը եղել է մարդաշատ՝ 1987թ. ունեցել է 312 ընտանիք՝ 1237 բնակչով: Վերջին 2 տասնամյակներին գյուղի բնակչությունը գրեթե 3 անգամ պակասել է: Շատերը մեկնել են արտագնա աշխատանքի՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն ու Ուկրաինա, մնացել այնտեղ, տարել ընտանիքները: Սակայն չեն մոռացել հայրենի բնակավայրի մասին, եւ մոտ 2 տասնյակ կորիսեցիներ, ովքեր հասել են հաջողությունների իրենց աշխատանքով, բարեգործությամբ մշտապես աջակցում են ծննդավայրի կայացմանը: Կորիսի բնակչության թիվը, ըստ արխիվային տվյալների, որը «Զավախք» գրքում ներկայացրել է Ս. Կարապետյանը, 1845-47, 1876-77, 1891-92 եւ 1912թթ. նվազել է: Առաջին պատճառը՝ կորիսեցի մի քանի ընտանիք տեղափոխվել են Ծակայի շրջան եւ հիմնել Նոր Կորիս գյուղը: 1892թ. տարածքում ընկնված համաճարակը նաեւ շատ կորիսեցիների, հատկապես երեխաների կյանք է խլել: Սուրբ Գեուրգ մատուռ-եկեղեցու բակում պահպանված գերեզմանատանը, գյուղացիների ասելով, հիմնականում այդ ժամանակ մահացած երեխաներին են թաղել: Գյուղում գործում է հանրային միջնակարգ դպրոց՝ 26 մանկավարժով եւ 76 աշակերտով (9-ը՝ առաջին դասարանցի): Աշակերտների թվում են նաեւ հարեան Թոթումբ բնակավայրի դպրոցականները: Ըստ գյուղացիների տեղեկության՝ 1907թ. գյուղի տարբեր գերդաստաններ վիճել են միմյանց հետ, որն էլ դարձել է պատճառ, որ մի քանի ընտանիք հեռացել է գյուղից եւ մոտ 2 կմ հեռավորությամբ Թոթիսանը հիմնել, որն էլ 1912թ. ստացել է առանձին բնակավայրի կարգավիճակ: Կորիսում կրթարան գործել է դեռեւս 19-րդ դարի երկրորդ կեսերից: Եկեղեցական-ծխական դպրոց-կրթօջախի գործունեությունն սկիզբ է առել 1860-ականներից: Սակայն հանրակրթական դպրոցը բացվել է 20-րդ դարի 30-ական թթ.: 1970թ. կառուցվել է դպրոցի նոր շենքը:

Գ. Նանդիյանը տեղեկացրեց, որ բարեփառների աջակցությամբ գյուղի տները գազաֆիկացվել են, կենտրոնական փողոցներն ունեն գիշերային լուսավորություն, կարգավորվել է խմելու ջրի վիճակը, կառուցվել է հանդիսությունների սրահ, կառուցվում է բուժկենտ: Մանկապարտեզի շենքը պատրաստ է, սակայն դեռ նախակրթարանը չի գործում, չնայած գյուղում մոտ 20 նախադպրոցական երեխա կա: Բարեկարգվել է գլխավոր ճանապարհից գյուղ մտնող մոտ 2 կմ ճանապարհահատված, որը շուտով պետք է ասֆալտապատվի Վրաստանի կառավարության կողմից:



(Հարունակելի)

3 ← Դավիթ Էդուարդի Սարապյանը

Հանդիսավոր մասից հետո ներկաները դպրոցի միջանցքում ծանոթացան հերոսին նվիրված անկյունում ցուցադրվող նրա անձնական իրերին, լուսանկարներին, Կոմանդոսի ու այլոց հուշերին։ Այնուհետև դպրոցի աշակերտները, հերոսի լուսանկարով շապիկներով ներկայացրեցին նրա անցած կյանքի պատմությունը։ Դավիթին, Կոմանդոսին, Պարգևե սրբազանին մարմնավորել էին դպրոցականներ Հովհաննեսը, Սարգիսը, Դավիթը։ Դավիթը ծնվել է 1966թ. փետրվարի 4-ին Երեւանում, ճարտարապետի ընտանիքում։ Հայրը՝ Էդուարդ Սարապյանը, Երեւանի գլխավոր ճարտարապետն էր, մայրը՝ Էմմա Սարապյանը, ականավոր գիտնական։ Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետ։ 1984թ. մայիսին մեկնել է խորհրդային բանակ, ծառայել Բայկոնուրի զորամասում, ապա՝ Խմելնիցկու մարզում։ 1985թ. հոկտեմբերին նրան դատապարտել են 4 տարվա ազատազրկման ազգամիջյան կոնֆլիկտի համար։ Բանտից դուրս գալուց հետո ինստիտուտ չի վերադարձել։ Աշխատել է որպես ռեժիսոր, գրել «300 վայրկյան» վիպակը։ 1990-ից արդեն հայոց ազատագրական ջոկատների կազմում էր։ Մասնակցել է Շահումյանի շրջանի Բուզլուխ, Մանաշիդ, Դարաշինար, Սարիսու, Էրեքեջ եւ այլ բնակավայրերի պաշտպանական մարտերին։ 1991թ. հոկտեմբերի 30-ին մասնակցել է Հաղիրուի շրջանի Տոդ գյուղի ազատագրմանը։ Նա արմատներով Արցախի այս բնակավայրից էր՝ Դիզակի մելիքանիստից։ Զոհվել է Շահումյանի շրջանի Թողան գյուղի համար մղվող մարտում 1991թ. դեկտեմբերի 10-ին։



Դեփ աճուռն ամփոփված է Երեւանի «Եռաբլուր» զինվորական պանթեոնում՝ զինակից ու ջոկատի շտաբի պետ Տիգրան Սարգսյանի շիրմի հարեանությամբ։ Երեւանի Զոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցում բացվել է Դավիթ Սարապյանի անունը կրող դասարան։ Դպրոցականները ներկայացրեցին նաեւ Կոմանդոսի եւ Պարգե սրբազանի հիշողությունները Դավիթի մասին։ «Դավիթն անմիջապէս աչքի ընկավ։ Բարձրահասակ, ինտելիգենտ, ներկայանալի։ Զարմացնում էր իր էրուդիցիայով, կարդացածությամբ, բայց, դրանով հանդերձ, երբեք չէր ընդգծում իր գերազանցությունը։ Բոլորիս հիացնում էր նրա հումորի զգացումը. նրանից կատակների ու սրախոսությունների տարափ էր հորոգւել։ Եվ, իհարկե, ապշեցնում էր նրա բնածին ռազմական տաղանդը։ Ընդունակ էր ամենաբարձր մասնագիտական մակարդակով մշակել ռազմավարական բարդ գործողություններ եւ նույն հաջողությամբ իրականացնել դրանք։ Օժտված էր մարտական ու մարդկային հազվագյուտ հատկություններով։ Երբեք որեւէ բան ուրիշի վրա չէր գցի, ստանձնում էր ամենաբարդ ու վտանգավոր առաջադրանքները։ Իմ ամենալավ հիւսիսաւարներից էր, ում անվերապահ վստահում էի։ Իր մարտական գերազանց կարողությունները դրսեւորեց հատկապէս Տոդ գյուղի ազատագրման ժամանակ։



«Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի նախագահ Արմինե Պետրոսյանը «Դավիթ Սարապյան» նախաձեռնության խմբի կողմից պատվոգիր եւ նվերներ շնորհեց դպրոցի այն աշակերտներին, ովքեր աչքի էին ընկել այս արարողության կազմակերպման գործում։ Դպրոցի զինղեկ, պահեստազորի փոխգնդապետ Արմեն Դավթյանի ուղեկցությամբ ՆՃՊ դասասենյակում ծանոթացա փառքի սրահին։ Դպրոցի շրջանավարտներից Ալեքսանդր Կարապետյանը եւ Լեւոն Սարգսյանը զոհվել են 44-օրյա պատերազմի ժամանակ։ Նրանց հիշատակին խաչքար է կանգնեցված դպրոցի բակում։ Զ. Ը.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քաշաթաղի շրջվարչակազմը, ԱԱԾ շրջանային բաժինը, ԱՀ ԱԱՄՀՆ միասնական ծառայության գործակալության կենտրոնական բաժինը, Բերձորի քաղաքապետարանը, «ՄԵՐԱՆ»-ի խմբագրակազմը ցավակցում են ԱՀ Քաշաթաղի ԱԱԾ շրջբաժնի նախկին պետ երջանակազմերը ցավակցում են ուսուցիչ Վաղդիկ Միրզոյանին՝ սիրելի մայրիկի մահվան կապակցությամբ և հայտնում զորակցություն հանգուցյալի հարազատներին։

Քաշաթաղի շրջվարչակազմը, Բերձորի քաղաքապետարանը, «ՄԵՐԱՆ»-ի խմբագրակազմը, Վ. Թեքեյանի անվ. թիվ 1 միջն. դպրոցի և մանկապատանեկան մարզադպրոցի անձնակազմները ցավակցում են ուսուցիչ Վաղդիկ Միրզոյանին՝ սիրելի մայրիկի մահվան կապակցությամբ և հայտնում զորակցություն հանգուցյալի հարազատներին։

ՄԵՐԱՆ

ՓԲԸ խորհրդի նախագահ՝

Զ. Ըոքոյան

4 ← Ոգեկոչման արարողություն

Հիմնադրվել է 1963թ. Աջափնյակում՝ ունենալով 2000-ից ավելի աշակերտ։ Հիմնադիր տնօրենն է Զավախի Գանձա գյուղում ծնված Մերութան Իսախյանը։ 1966-ին կրթօջախը կոչվել է բուլղարացի, հայ ժողովրդի բարեկամ, «Հայերը» բանաստեղծության հեղինակ Պեյո Յավրոյվի (1878-1914) անունով։ «Երբ ես գրեցի «Հայերը» եղերեղգը, գրչածայրս թաթախում էի ոչ թե թանաքի մեջ, այլ հայ ժողովրդի վշտերի ու հուզմունքի ծովը... Գրում էի հուզված՝ այս բազմաշաբառ աշխարհում փնտրելով մարդկայնություն եւ արդարություն։ Այսպես ծնվեց իմ «Արմենցին» 1899 թ.»- գրել է Պեյո Յավրոյվը։ Այժմ դպրոցում սովորում են 1300-ից ավելի աշակերտներ (<<-ում աշակերտների թվով 7-րդն է)։ Գործում է 5 առաջին դասարան՝ ընդհանուր 163 աշակերտով։ Աշխատող 85 ուսուցիչներից 32-ը, այդ թվում նաեւ տնօրենը, նույն դպրոցի շրջանավարտներ են։ Առայժմ մասնագետի կարիք չունեն։ Դպրոցում գործում են «Վարդուհի Վարդերեսյան» արտիստական թանգարանը, որը բաղկացած է երկու սրահից եւ գերհագեցած է թեմատիկ նյութերով, «Վարդգես Սուրենյանց» գեղեցիկ արվեստների կենտրոնը, Պեյո Յավրոյվի անվան հայ-բուլղարական բարեկամության թանգարանը, գեներալ-գնդապետ Գուրգեն Դավթաթայանի անվան ռազմական փառքի սրահը։

Գործում են նաեւ հայ մեծերին՝ Վեհափառ Վազգեն Առաքինին, Ֆիզիկոս Գրիգոր Գուրգադյանին, Պարույր Սեւակին եւ այլոց անվան դասասենյակներ։ Մարգարահիճը Ալբերտ Ազարյանի անունով է կոչվում։ Ռազմագիտության դասասենյակն անվանակոչված է ի պատիվ Գարեգին Նժդեհի։ Դպրոցում գործում են մարզական, հույուն-քաղաքական, նկարչական, իկերանայի խմբակներ, «Ժպիտներ» պարախույժը, ուսուցչական երգչախումբը, որի ղեկավարը եղել մինչ վախճանվելը՝ Սուսաննա Խաչատրյանը։ Առաջին հարկում է Սիլվա Կապուտիկյանի անունը կրող գրադարանը։



Գրադարանավար Անահիտ Մովսեսյանն ասաց՝ ունեն 1700 կտոր գեղարվեստական գրականություն, 730 ընթերցող։ Փոխտնօրեն Մարիամ Ոսկանյանն ասաց՝ թանգարանների ու դասասենյակների բացմանը հիմնականում ներկա են եղել նաեւ անվանակիրները։ Երրորդ հարկում գործում է «Վերնատունը»։ Առաջին հարկում բացօթյա գործում է փառքի անկյուն։



Դպրոցի 4 շրջանավարտ՝ Արմեն Կոթույանը, Գագիկ Տեր-Ղուկասյանը, Մեմյոն Հարությունյանը եւ Հովհաննես Մարտիրոսյանը, նահատակվել են արցախյան առաջին զոյամարտի մարտերում։ 1995թ. ծնված Միեր երգչկյանը նահատակվել է 2016թ. քառօրյա պատերազմում։ 6 շրջանավարտ՝ Արամ Հովհաննիսյանը (ծնվ.՝ 1995թ.), Նարեկ Աղոյանը (2001թ.), Աշոտ Հովհաննիսյանը (1994թ.), Ռոլանդ Սարգսյանը (1981թ.), Ալբերտ Վալսյանը (2001թ.), նահատակվել են 44-օրյա պատերազմում։ Կա նաեւ անհետ կորած։

Վերջերս բացվել է նաեւ նահատակ տղաների հիշատակի դասասենյակ՝ նրանցից եւ՝ տարիքով, եւ՝ կոչումով ավագ Ռոլանդ Սարգսյանի անունով։ Այժմ այս դասասենյակում կանգնեցված է տոնածառ։ Սարգսյանն այս դպրոցում սովորել է 1988-1998թթ.։ Այստեղ են սովորում նաեւ նրա երկու զավակները։ Նույն դպրոցում դասավանդում է նաեւ Ռոլանդ Սարգսյանի կինը։ Դպրոցի առջեւ տեղադրված է Պեյո Յավրոյվի կիսանդրին (քանդակագործ՝ Գրիգոր Ահարոնյան)։

4 ← Հերոսների ոգին անմահ է



Արսեն Համբարյանի հեղինակային երգերը՝ «Լեոնիդը» եւ «Ազգայրյանի պատգամը», «Նժդեհը Երեւանի բանտում», շատերը լսեցին առաջին անգամ։ Երգիչն անդրադարձավ նաեւ մեծն Նժդեհի դերին հայ ժողովրդի կյանքում։ Երգում Նժդեհը խնդրում է իրեն տեղափոխել օտար երկրի բանտ, որ չմեռնի Երեւանի բանտում։ Երգի գործիքավորմանն աջակցել է Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին՝ բարեգործական հիմնադրամը։ Համերգին ներկա էր հիմնադրամի նախագահ Գուրգեն Մելիքյանը, ով 1 օր առաջ դարձավ 86 տարեկան։ Նժդեհ-անհատի մասին խոսեց նաեւ Գ. Գինոյանը՝ նշելով, որ Նժդեհին «Ֆաշիստ» անվանողները պետք է ճանաչեն նրան, ով Այուրիքում գտնվող թուրքական բնակավայրերն ազատագրելու իր գինվորների կոչ էր անում չվնասել թշնամու կանանց ու երեխաներին, ծնրերին, սպանել միայն դիմադրողներին։ Նույն պատգամն էր անում նաեւ Լեոնիդը։ Արսեն Գրիգորյանը «Մարտիկի երգը-Թոշքի մտքով տուն» երգով սկզբում հանդես եկավ։ Իրեն ուղղված ծափերը հասցեագրեց անմահ ու ողջ հերոսներին, սահմանի զինվորին, այսօր ամբողջովին շրջապատման մեջ գտնվող, սակայն պայքարող ու իր հողի տերը մնացող արցախցուն։ Մյուս կատարումների ժամանակ դահլիճում շուրջպար էր։ Շուշան Պետրոսյանի կատարած երգերը նվիրված էին Արցախին։ Հուզմունք էր ողջ դահլիճում, շատերի աչքերին արցունք էր։ Մաքառող Արցախը միշտ է հուզել մեր ժողովրդին եւ այսօր, քան երբեք, Արցախը բոլորիս օգնության ու աջակցության կարիքն ունի։ Դահլիճում ներկաներից մի մասը նույն օրը մասնակից էր հանուն Արցախի կազմակերպված բողոքի ակցիաներին։ Դավիթ Ամալյանի «Պատիվ ունեմը» շատ է հնչել եւ միշտ ընդունվել է մեծ ոգետությամբ։ Արցախյան 44-օրյա պատերազմում Վարդան հրաշք որդուն կորցրած երգիչն իր մեջ ուժ է գտնում՝ ոգեկոչելու բոլոր նահատակ քաջորդիներին։ Դահլիճում հատկապես մեծ ոգետություն էր, երբ հնչում էին պարեղանակները, նաեւ՝ երգերի կատարումներով, ու բեմում էին «Կարինը», «Բեկորը», «Ծովակը»։ Համերգն ավարտվեց ուշ երեկոյան, ու հանդիսատեսը տուն գնաց՝ իր հետ տանելով Լեոնիդի ու Ամոյի պատգամները, որոնք էին. «Արցախը Հայաստան է, եւ վերջ...», «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը...»։

ԱՅՈՒՆ ԿԵՐԶ

Փակվում է 2009թ. դեկտեմբերին հիմնված «ՄԵՐԱՆ» Քաշաթաղի շրջանային թերթի վերջին էջը։ «ՄԵՐԱՆ»-ն այսուհետ կգործի արդեն այլ ձևաչափով՝ ոչ պաշտոնաթերթ։ 13 տարիների ընթացքում «ՄԵՐԱՆ»-ը եղավ Քաշաթաղի շրջանի պատմության ողբերգիչը՝ իր էջերում անորոշառնալով շրջանի բազում ողորտներին ու խնդիրներին։ Թերթի էջերում շատ են տարածքի, նաև՝ Արցախի այլ շրջանների պատմամշակութային հուշարձանների մասին պատմող նյութերը։ Հետագայում էլ կփորձեն «ՄԵՐԱՆ»-ի շուրջ համախմբված պահել քաշաթաղիցիներին՝ համոզված շատերը կպահպանեն կապն իրենց սիրելի թերթի հետ։ Հավատում եմ նաև՝ 2023-ը լինելու է մեր ժողովրդի համար ծեղրբերումների տարի՝ Արցախն ազատագրված, ճանապարհը բաց։

Համարի լուսանկարները՝ Զ. Ըոքոյանի

ՄԵՐԱՆ

ՓԲԸ խորհրդի նախագահ՝

Զ. Ըոքոյան

Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում։ Նյութերում առկա տվյալների, մեջբերումների և ընդհանրացումների համար պատասխանատու են հեղինակները։

ԱՀ, ք. Բերձոր, 5-րդ թաղամաս, 34 շենք
Հ/հ 22316100511901
«Արցախբանկ» ՓԲԸ, Բերձոր մ-դ
Հեռ.՝ (047)752076, (093)366601

Տպագրվում է «Էդիթ Պրինտ» Հրատարակչության Տպարանում։

Տպաքանակ՝ 500

Էլ. Հասցե
tertmeran@mail.ru
http://merantert.info/

Հրատարակվում է 2009 թ.դեկտեմբերից։